

բայ, ինչպէս նաև մի մարդ՝ կանգնած մի ուրիշ վիշտի վրայ երկրորդ երեսի վրայ մի մարդ՝ թառ ածելիս, կողքերին հացեր և դաւ Շուրջը զրուած է.

Այս է հանգիստ Քասպարին որդի պարոն Ամիրջէճանին, թոռն մեծին Գրճհանշին. թվ. ԶԶԳ (=1534) էրփիսց Ք. որք հանդիպիք յիշեցէք ի Քա,

Այս արձան ներկեալ յարեամբ փրկչական վասն Ռըստակէս քննին հոգոյն փրկութեան.

Յանարժան Բաղդաստը Մէլիկպէկ կազմող:

Այս խաչքարի մօտի խաչքարի վրայ.

Սուրբ խաչս բարեխսաւս Ղզըլին. կանգնեցաւ Ռոտակէս քննին եւ դստերց Խորնին եւ Խնառումին (") թվին ՌՃԵ.ին (=1658)

Մի խաչքարի վրայ.

Թվին ՌՃԵ (=1658) էր. ի կամակցութեամբ Աստուծոյ և հոգեբարձութն Գրիգորի... քաջ բարունոյ հօր եղբօր մերոյ ես նուաստ Ներսէս էրէցս և եղբայրս իմ Պաղի որդիք Արիստակէս քննին որդոյ Թումա քննյին որդոյ պրն Մելքոնին թոռին մեծին Զահնշին յուսով մեծաւ կանգնեցաք զսրբ խաչս ի փրկութիւն հոգոյ հօրն մերոյ.

Գիւղի հարաւային կողմում ևս կայ մի գերեզմանատուն, որտեղի խաչքարերը և տապանաքարերն արդէն գիւղացիները տարել շինութիւնների վրայ զործածել են.

Գիւղի այժմեան բնակիչները շիա թուրքեր են, մի մասը Նոր-Բայազէտի Բաշքեանտ, միւսը Գոմաձորից 1830 թուին գաղթած: Ընդամէնը 69 տուն են, 89 ար. 84 իգ. միասին՝ 173 հոգի:

ԶԻԼԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԶԻԼ—(62° 7'—40° 27' 17'')—Տեղաւորուած է Շահ-դաղ լեռան և սրա ճիւղ Տանա և Հաճի-Մալիք կոչուած սարերով կազմուած հովառում, լճից մօտ 3 կիլոմետր հեռու Գիւղի միջով հոսում է մի գետակ՝ Աղ-սու անունով, որ բղխում է Շահ-դաղ լեռան ստորոտից: Գիւղում կայ հայկական չորս աւեր եկեղեցի, որոնցից մինը բաւական մեծ է, և միայն պատերի կէսն է մնացել. ունի մի, աջակողմեան, խորան. սեղանի երկու կողմը կան

մի մի մեծ, սև խաչքար, որոնցից մինի վրայ դեռ ևս կարդացւում է։—

Կանգնեցաւ սուրբ խաչս յիշատակ պարոն Շահէ-որդի։

Այս եկեղեցին այժմ ծառայում է իրը ոչխարանոց։ Միւս երկու եկեղեցին հիմնովին աւելի են, իսկ երրորդի քարերի կէսն են տարել՝ որովհետեւ իրը խոսատեղի կարողանում են գործածել։ Տները գետնափոր, շատ ողորմելի են, բնակիչները շիաթուրքեր են Ղազախի Խնճա գիւղից գաղթած նախ նորագուզ և ապա՝ հայոց 1830 թ. գաղթականութեան ժամանակ՝ այստեղ։

Պարապմունքը նոյնն է. այստեղ ևս գործում են գորգ և կապերտ։

Զիլից փոքր ինչ հեռու, Հաճի Մալիք լերան լանջին կայ մի ընդարձակ գերեզմանատուն, որի գրեթէ բոլոր տապանաքարերը հասարակ, մեծ, ժայռ քարեր են, առանց տապանագրի և նոյն իսկ առանց խաչի։

Արտանիշ—(630 1' 30"—40° 31' 4").—Շահ-դաղի ճիւղերից երկուսը դէպի ծովին ուղղուելով եռանկիւնաձև կտրում են միամեանց՝ մի գեղեցիկ հովիտ կազմելով, որի առջև, լճափին, ձգւում է Աղա-Թափա թերազզի։ Լճափը, որ մինչև այստեղ չափազանց նեղ է, փոքր ինչ լայնանում է և գեղեցիկ գիւղատեղի կազմում։

Գիւղի միջով հոսում է Աղ-սու գետակը՝ Շահ-դաղից սկիզբ առնելով։ Գիւղի մէջ, ինչպէս և նրա արևելեան կողմում ձգուող բլուրներից մինի վրայ, կան մի եկեղեցի և մի քանի տապանաքարեր, առանց գրութեան։

Արտանիշի բնակիչները Ղազախի և Ղարաբաղի զանազան գիւղերից են, նախ Նորագուզ և Մակքար գաղթած և ապա՝ հայերի 1830 թ. գաղթած միջոցին՝ այստեղ վերաբնակուած։ Ընդմենը 156 տուն են, 528 ար. 472 իգ. միասին 1000 հոգի։ Պարապմունքը նոյնն է։ Մրանք ևս ձկնորսութեամբ չեն պարապում։ Մալականներից սովորել են ձիեր լծել կամին։ Դաշտային աշխատանքներին՝ հնաճելուն, փոցինելուն կանայք էլ են մասնակցում։

Կարավանսարայ. — Սատանախաչ և Ղուշչի-դարասի գիւղերի միջն 1488 դ. 1800 թ. տեղ պատկանում է Զօղեցի մի թուրքի (Մամանդ-աղա Թեսամանսկուն), որ իւր համար բնակարան և անասունների համար գոմեր է կառուցել և պարապում է անասնապահութեամբ։ Ահա այս տեղը կոչւում է Կարավանսարայ։ Համարւում է մի լաւ ձմերանոց, որովհետեւ ձմեռն այստեղի լեռների արևելահայեաց լանջերը կապալով են արւում շրջակայ- գիւղացիներին՝ հօտերն արածացնելու Ղուշչի-Դարասու բնակիչ-.

ները շատ անգամ գանգատուել են՝ որ վերոյիշեալ կալուածաւտէը խլել է իրենց արօտանեղուց և վարելահողից, սակայն միշտ էլ սրանց գանգատը անհետնանք է մնացել.

Դուշիբդարասի. — (63⁰ 11' 40" — 40⁰ 23' 5") — Տեղաւորուած է Կըսըր կոչուած լերկ գաղաթների ստորոտում, Սևանայ լճի անմիջապէս ափին, Գիւղի միջով հոսում է մի գետակ, որ բղիսում է Կըսըր լեռներից: Տները չափազանց ողորմելի են, բոլորն էլ գետնափոր, գրեթէ որջեր Կան մի քանի պարտէց ուր նոր սկսել են կարտոֆիլ ցանել, մի քանի էլ ուրի ծառեր են տնկել: Բնակիչները շիա այրումներ են, 1850 թուին Աղէքսանդրապոլի գուառի Փամբակի շրջանի Վարդանլու գիւղից գաղթած: Ընդամենը 66 տուն են. 188 ար. 164 իգ. միասին 352 հոգի: Պարապմունքը նոյնն է:

Դուշիբդարասուց փոքր ինչ բարձր, Խաթարալա կոչուած մի բլրակի վրայ կայ հայկական մի ընդարձակ գերեզմանատուն, ուր ձգուած են մեծ, մեծ, հասարակ գերեզմանաքարեր, մեծ մասը առանց տապանագրի: Մի քառանկիւնի տապանաքարի վրայ գրուած է.

Այս է հանգիստ Ոհաննիսին. թվին Ռուն Ռուն (—1652):

Գերեզմանատնից փոքր ինչ հեռու, ձորակի մէջ մնում է հայկական մի մեծ եկեղեցու հիմնապատեր:

Բարաջան-դարասի. — (63⁰ 8' 25" — 40⁰ 24' 47"). — Տեղաւորուած է Շահ-դաղ լեռնաշղթայի ճիւղերից կազմուած մի ձորակում, որի միջից հոսում է մի գետակ, սկիզբն առնելով Շահ-դաղ լեռնաշղթայից:

Գիւղը գարդարուած է մի քանի ուռենիներով: Գիւղի մէջ կան մի հայկական աւեր եկեղեցի և մի քանի խաչքար, առանց գրութեան: Տները գետնափոր, խղճալի շինութիւններ են: Բնակիչները շիա այրումներ են, կէս դար առաջ Շիշ-Կայա գիւղից գաղթած՝ Բարաջանի առաջնորդութեամբ, որի անունով էլ գիւղն է կոչուել, Ընդամենը 51 տուն են. 181 ար. 128 իգ. միասին՝ 259 հոգի: Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ:

Բնակիչների տնտեսական դրութիւնը շատ վատ է, որովհետեւ վարելահողն ընդհանրապէս քարթարոտ է, և բացի դրանից՝ մեծ մասամբ լեռների լանջերը լինելով՝ անձրևային տարիներում ցանքսը սահում թափուում է լինը, իսկ երաշտ ժամանակ համեն այրում է, որովհետև շատ շոգ է լինում: Բացի ցորենից և զարուց այս տարի միայն սկսել են նաև կարտոֆիլ ցանել, այն էլ մօտակայ մալական ուռմների ազդեցութեամբ: Անասնապահու-

թիւնն էլ շատ չի զարգացած, որովհետև շատ աղքատ են. ամենահարուստը միայն 26 ոչխար ունի: Ձկնորսութեամբ չեն պարապում, որովհետև ոչ նրանց նիւթական գրութիւնը և ոչ ունեցած շնորհը այդ թոյլ է տալիս:

Ամբողջ երկարատև ձմեռն անդորժ մնում են տներում և միայն շատ քչերը գնում են Գանձակի գաւառի Գետարէկի պղն-ձի հանքում մշակութիւն անելու: Կանայք գործում են գորգեր և կապերատներ:

Սատունախաչ կամ Սէղանախաչ և կամ Հածի Գարիբ.—(63°16'25"-
—40°20'25").—Քարքի բաշ, կոճա-դաղ և Գիւնէյ սարերը մի փոք-
րիկ, բայց հարթ հողիտ են կազմում, որի մէջ տեղաւորուած է Սատանախաչ, բայց աւելի ճիշտ՝ Սեղանախաչ գիւղը, որ այսպէս
է կոչում, որովհետև այստեղ եղել է սէդ-քրդերէն երեք—խաչ:
Կոչում է նաև Հածի-Գարիբ այն մարդու անունով, որ 1868 թուն
այժմեան բնակիչներին բերել է այստեղ Գանլի Ալլահվերդի գիւ-
ղից, Գեղածիծաղ լիճը տարածուելով գիւղի առաջ՝ սքանչելի տե-
սարան է ընծայում, ինքն էլ զարդարուած է ուռենիներով և ու-
նի մի կարկաչուն վտակ, որ իշում է Մառալ-բուլաղից:

Գիւղի արևմտեան կողմում եղել է մի եկեղեցի, որ այժմ
քանդել են և տեղը պարտէզ զարձրել, քարերն էլ պատնէշի հա-
մար գործածել. մօտի երեք խաչքարեր, որոնք առանց զրու-
թեան են, ձգուած են մօտակայ գիւղացիների տների առջև՝ ոչ-
խարներին աղ տալու համար գործածելու նապատակով:

Եւ որովհետև այս կողմին աւագակութիւնը սաստիկ տա-
րածուած է, այս պատճառով էլ 15 տարուց ի վեր այստեղ պա-
հակատուն կայ: Բնակիչները շինա-թուրքեր են, 52 տուն. 181 ար.
162 իգ. միասին 343 հոգի: Պարապմունքը նոյնն է,

Նաղեծղին կամ Շորժա.—(62°56'14"- 40°30'50").—Զետե-
ղուած է լճի անմիջապէս ափին, երեք կողմից շրջապատուած
բլուրներով, որոնք պաշտպանում են նրան սաստիկ հողմերից:
Գիւղի առջև բացում է լճի չափազանց գեղեցիկ տեսարանը. ա-
րևելիան կողմում ձգում է Աղա-թափա թերակղզին, որի գա-
գաթից տեսարանը աւելի ևս սքանչելի է: Գիւղի արեւելիան
կողմը, բլրի լանջին կայ հայկական մի սագաշէն, փոքրիկ եկե-
ղեցի, շուրջը գերեզմանատուն, ուր մի տապանաքարի վրայ կար-
դացում է.

Աստուած ողորմի Աւետիս աղին:

Փոքր ինչ բարձր, նոյն բլրի գագաթին ևս կայ մի ուրիշ,
փոքրիկ սագաշէն եկեղեցի, պարսպապատու, Բլրի շուրջն էլ նկա-
տելի են պարսպի հետքեր: Այս բլրից փոքր ինչ արեւելք ձգում

է Ազա-թափա թերակղղին, որի գագաթին դեռ ևս մնում են մի հին ամրոցի պարիսպները։ Մի նեղ շափող՝ ժայռապատ գագաթից իջնում է արեւելեան սաստիկ նեղ ափը, ուր կանգնած է մի փոքրիկ, հասարակ եկեղեցի, դեպի հարաւ հարթ տեղում՝ մի քանի տոների աւերակներ, որ յայտնի են Ալթի-սարայ անունով։

Նաղեմդինօ գիւղը ունի կանոնաւոր, լայն փողոցներ և քարէ տներ՝ հարթ, հողածածկ կտուրներով։ Բնակիչները ուու աղանդաւորներ են՝ մալական, պրիգուն և սուբբուտնիկ։ Գաղթել են այստեղ 1851 թուին Սամարայի նահանգի համանուն գաւառի Կարինա և այլ գիւղերից։ ընդամենը 59 տուն են. 211 ար. 218 իգ. միասին՝ 429 հոգի։ Պարապում են ինչպէս երկրագործութեամբ և անասնապահութեամբ, այնպէս և ձկնորսութեամբ։

Աղբուլաղ. — ($31^{\circ} 56' 40'' - 40^{\circ} 31' 55''$). — Թրքարնակ մի մեծ գիւղ է, զուրկ որև է ուշագրաւ բանից։ Բնակիչները 148 տուն են, 281 ար. 459 իգ. միասին՝ 940 հոգի։ Պարապումքը նոյնն է։ Հողերը չափուած և ցուցակագրուած են Զիլի հողերի հետ։

Թոխուրջա, հնումը՝ Դրախտիկ ($62^{\circ} 54' 57'' - 40^{\circ} 33' 55''$). — Տեղաւորուած լինելով Սևանայ լճի հիւսիսային ափին, համանուն գետակի շուրջը՝ շատ գեղեցիկ տեսք ունի։ Բնում է 9 դիսեամին 1800 ք. սաժէն տարածութիւն։ Գիւղում կայ մի հին եկեղեցու հիմնապատեր և մի քանի խաչարձաններ՝ առանց գրութեան։ Բնակիչները շիա թուրքեր են, 155 տուն, 609 ար. 561 իգ. միասին 1170 հոգի։ Պարապմունքը նոյնն է. ունին 400 դ. 1600 ք. ս. վարելահող, 355 գ. 1200 ք. ս. խոտատեղի, 1647 դ, 220 ք. ս. արօտատեղի։

